

Մ. Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ

ՎԱՐԱԶԴԻԱՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



✓
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Մ. Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

A II
86830



«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂ»
ԵՐԵՎԱՆ 1989

Հասրաթյան Մ. Մ.
Հ 3686 Վարազդատ Հարությունյան: ՀԽՍՀ պատմ. և կուլտ. հուշարձանների պահպան. ընկ.— Եր.: Խորհրդ. գրող, 1989.— 40 էջ, 16 թ. նկ.:

Գրքուկը նվիրված է Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, Թորոս Թորամանյանի անվան մրցանակի դափնեկիր, Ճարտարապետության դոկտոր-պրոֆեսոր Վարազդատ Մարտիրոսի Հարությունյանի կյանքի ուղուն, հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության ուսումնասիրման ուղղությամբ նրա վաստակին, մանկավարժական և հասարակական քաղմամյա գործունեությանը:

Հրատարակվում է Ծննդյան 80-ամյակի առթիվ: Ներկայացվում է հայ ճարտարապետության պատմության մասնագետներին և ընթերցող լայն հասարակությանը:

4902020000 ()

Ա ————— առանց հայտ.
 705 (01) 89

ԳՍԴ 85. 113(2Հ)7

ISBN 5—550—00547—6

© Հայկական ԽՍՀ Պատմության և
 կուլտուրայի հուշարձանների պահպանության
 ընկերություն

Հայ ժողովրդի երեք հազարամյակից էլ ավել ժամանակաշրջանում ստեղծված ճարտարապետական հսկայական ժառանգության ուսումնասիրությունը մեր հայրենիքի մըշակութային շինարարության կարևոր բնագավառներից մեկն է: Այս շնորհակալ աշխատանքում իր նշանակալից ներդրումն ունի ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանը, որն ինքնուրույն աշխատանքի հենց առաջին քայլերից իր ողջ գործունեությունը նվիրեց այդ կարևոր գործին:

Ծնվել է 1909 թ. նոյեմբերին, Վան քաղաքում, դերձակի ընտանիքում:

Դառն է եղել անվանի գիտնականի մանկությունը: Ղեկվեց տարին չբուրած, նրանց բազմանդամ ընտանիքը, մեր ժողովրդի մեծ հատվածի հետ տեղահան արվեց և, զրկվելով իրենց հայրենի օթևանից, բռնեց գաղթի ճանապարհը: Թուրքական լաթաղանից մազապուրծ, նրանք թողեցին այն ամենը, ինչ հարազատ էր՝ նվիրական ծննդավայրը ծիծաղախիտ Վանա լճի ափին, պապական տունն Այգեստանում: Թողեցին և Զանիկ տատին. որը չհամաձայնվեց ամալացնել հայրենի օջախը...

Տասնամյակներ են անցել, բայց Վարազդատ Հարությունյանի աչքերի առջև միշտ հառնում է հայրենի քաղաքի անմոռաց պատկերը, կապված արդեն երազի նմանվող վաղ մանկության անհոգ օրերի հետ: Նվիրական Այգեստանը, Չալըղի

փողոցը և հրապարակն ավազաններով, իրենց տունն ուղղանկյուն բակով, իրենց ընտանիքի և հորեղբոր հարկաբաժիններով, թոնրատունը, ջրհորը. և վերջապես հիանալի այգին անուշահոտ խնժորենիներով ու տանձենիներով: Հոչակավոր էր այդ այգին ողջ Ալեքստանում իր ծաղկանոցով, որը մշակում էր հորեղբայրը՝ Արթեն աղան:

1915 թ. օրհասական գարնանը այդ ամենը հուշ դարձան.. Գաղթի ժամանակ բաժան-բաժան եղավ Հարությունյանների ընտանիքը՝ հայրը դարձավ կամավորական խմբի անդամ, որն անհավասար կոիվներում կյանքի գնով պաշտպանում էր ուժասպառ և հոգետանջ փախստականների խմբերին: Մայրը և բույրերը փրկարար սահմանին հասան Պարսկաստանի վրայով, Ուրմիա լճի ափերով: Իսկ չորս անչափահաս եղբայրները, որոնց մեջ և մանուկ Վարազդատը, անջատված ծնողներից և հարազատներից կմնային գաղթի դժոխային ճանապարհին. եթե չհանդիպեին ռուսական նահանջող զորքի գումակներին:

Հուլիս ամսին Հարությունյանի ընտանիքի երեխաները շատ-շատերի հետ արդեն էջմիածնում էին: Սակայն սկսվեց նոր աղետ՝ տիֆի համաճարակը, որին զոհ գնացին եղեռնից փրկվածներից շատերը, այդ թվում Վարազդատի կրտսեր եղբայրը՝ Գուրգենը: Օգոստոսին հայրը էջմիածնում գտավ իր կորցրած հարազատներին ու ընտանիքը տեղափոխեց Թիֆլիս, որտեղ բնակվում էին Վարազդատի հարազատները: Սակայն տեղափոխվելուց շատ չանցած տիֆով հիվանդացան Վարազդատն ինքը, եղբայրը և ծնողները: Աշնանը վախճանվեց հայրը և ազգականները Վարազդատին, ավագ եղբորը՝ Արթուրունուն (այժմ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ) և քրոջը՝ Սիրանուշին տեղավորեցին Թիֆլիսի Ժիրանավոր վանքի որբանոցը:

1917 թ. գարնանը դուրս գալով որբանոցից, դեռ ութը տարին չբոլորած մենակ Վարազդատը մի կտոր հաց վաստակելու համար անցավ աշխատանքի պարոն Արշակի մոտ որպես հոտաղ: Միակ վարձատրությունն այն էր, որ հարուստի աղախիմները երեկոյան նրան կերակրում էին ճաշի մնացորդներով: Հոտաղությանը փոխարինեց կոշիկ մաքրելը, ջուր ծախելը:

1919 թ. Վարազդատը ընդունվեց Թիֆլիսի 6-րդ Կուկիական դպրոցը (հետագայում վերանվանվեց 82-րդ աշխատանքային դպրոցի): Ռժվար, շատ ղժվար էր նրան ամեն օր դասերից հետո նստել մեծ քաղաքի փողոցի անկյուններից մեկում և թե ամառվա շոգին և կամ ձմեռվա ցրտին ժամերով «մուշտարու» սպասել: Բայց առավել ղժվար էր լինում նրա համար, երբ այդ պահին դպրոցի իր դասընկերները կամ ուսուցիչները անցնեին այդ փողոցով: Հեռվից նկատելով որևէ ծանոթի, Վարազդատը թաքնվում էր մոտակա շքամուտքում, կամ գլուխը կախ էր գցում, եթե այդ ժամանակ զբաղված էր լինում կոշիկ մաքրելով:

Կյանքի բացառիկ ծանր պայմանները, մոլեգնող համաճարակային հիվանդությունները անխնա հնձում էին նրանց ընտանիքը: Այդ տարիներին Վարազդատ Հարությունյանը կորցրեց իր հարազատներից շատերին, ինը հոգուց բաղկացած ընտանիքից մինչև 1920 թ. ողջ մնացին մայրը, եղբայրը և ինքը...

Վ. Հարությունյանը միջնակարգ դպրոցն ավարտում է 1927 թ.: Դպրոցում նրա ուսուցիչներն են եղել Ծերուն Թորգոմյանը (հայոց լեզու և գրականություն), Արմեն Տիգրանյանը, Արմենակ Տեր-Աբրահամյանը, Արշալույս Ավագյանը (երգ և երաժշտություն): Դպրոցում բացահայտվեցին ապագա ճարտարապետի նկարչական և երաժշտական ունակությունները: Նա ուսման ընթացքում մշտապես մասնակցել է դպրոցի երգեցիկ խմբին (որպես մենակատար) և ամենամյա ցուցահանդեսներին:

1927 թ. ավարտելով դպրոցը, Հարությունյանը երեք տարի աշխատել է որպես ուսուցիչ Ծնող (այժմ Թումանյանի շրջան) գյուղի դպրոցում, ապա մեկ տարի եղել է Արժիսի (Նոյեմբերյանի շրջան) դպրոցի վարիչը: Այդ տարիներին նրա աշխատանքը չէր սահմանափակվում միայն նոր սերնդի դաստիարակությամբ: Վ. Հարությունյանը մասնակցում է նշված գյուղում անգրագիտության վերացմանը, կազմակերպում պատի թերթերի հրապարակումը, միաժամանակ նա ակտիվ բանգյուղթղթակից էր և օրվա հրատապ հարցերին, գյուղում սոցիալիստական շինարարության խնդիրներին նվիրված հոդվածներ էր տպագրում հանրապետական թերթերում:

1931 թ. Վ. Հարությունյանը ընդունվում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ծարտարապետական բաժինը, որը գերազանց դիպլոմով ավարտում է 1937 թ., ստանալով ծարտարապետի կոչում: 1935 թ. նախադիպլոմային պրակտիկան անց է կացրել ականավոր ծարտարապետ, ակադեմիկոս Ա. Վ. Զյուսևի գլխավորած Մոսսովետի № 2 ծարտարապետական-նախագծային արվեստանոցում, որտեղ մասնակցել է Կազան և Եփրեմով քաղաքների մշակութային պալատների նախագծմանը: Ղեկավարի բնութագրությամբ Վ. Հարությունյանը ցուցաբերել է իրեն որպես բացառիկ բարեխիղճ և պարտաճանաչ աշխատող, մեծ հետաքրքրասիրություն և լուրջ մոտեցում աշխատանքի հանդեպ:

Ղեկնս վերջին կուրսի ուսանող նշանակվում է ծարտարապետության ամբիոնի կաբինետի վարիչ պաշտոնում, իսկ ավարտելով ինստիտուտը, թողնվում է նույն ամբիոնում ասիստենտի պաշտոնով: Սկսած 1938 թ. Վ. Հարությունյանը ինքնուրույն վարում է ծարտարապետական ձևերի և օրդերների տեսության կուրսը, մասնակցելով կուրսային ծարտարապետական նախագծման դասավանդմանը: Կարճ ժամանակ (1938 թ. փետրվարից մինչև 1939 թ. սեպտեմբերը) կատարել է շինարարական ֆակուլտետի դեկանի պարտականությունը:

Հետաքրքրասիրություն դեպի պատմական ուսումնասիրությունները Վ. Հարությունյանի մոտ հանդես է եկել դեռևս ուսանողական տարիներին, ինստիտուտում սովորելու ընթացքում նա հանդես բերեց լուրջ մոտեցում դեպի հայ ժողովրդի մշակույթի ուսումնասիրությունը: Ավարտելուց անմիջապես հետո սկսեց կատարել հայ ծարտարապետության հուշարձանների չափագրումներ և հետազոտություններ, օգնել հուշարձանների վերակառուցման աշխատանքներին, մասնակցել հնագիտական արշավանքներին ու պեղումներին:

Սերը նյութական կուլտուրայի հուշարձանների պատմության նկատմամբ իր գիտելիքները հարստացնելու հայ ծարտարապետության խոր ուսումնասիրության ձգտումը Վ. Հարությունյանին բերեցին ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի պատմության և հնագիտության ինստիտուտի ասպիրանտուրա, որտեղ նա սովորել է 1939-41 թվականներին:

Մինչև 1941 թվի հունիս ամիսը պարապմունքները ասպիրանտուրայում համատեղել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ծարտարապետության ամբիոնում մանկավարժական աշխատանքի հետ, մասնակցել է Թ. Թորամանյանի «Նյութեր»-ի 1-ին հատորի կազմման ու հրատարակման նախապատրաստմանը:

Հնագիտության բաժնի կողմից (որի վարիչն էր պրոֆ. Սմբատ Տեր-Ավետիսյանը) նա մասնակցել է Ղվինի գիտարշավին. պեղումների ընթացքում չափազրել էին Հայաստանի մայրաքաղաքի ծարտարապետական կոթողները: Ասպիրանտուրայի երկրորդ տարում նրա գիտական ղեկավարն է եղել անվանի ծարտարապետ պրոֆ. Նիկողայոս Բունիաթյանը:

Հայրենական Մեծ պատերազմի սկզբում Վ. Հարությունյանը զորակոչվել է սովետական բանակի շարքերը, որտեղ ծառայել է որպես էվակուացիոն հոսպիտալի Բ.Ծ.Բ.-ի պետ: Ջորաջրվելով 1942 թվի մայիս ամսին, ուղարկվել է պոլիտեխնիկական ինստիտուտի տրամադրության տակ, որտեղ նշանակվել է ուսումնական մասի վարիչ և ծարտարապետության ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնում: Այդ նույն տարում նա ընդունվում է ՍՄԿԿ-ի շարքերը, որպես անդամ (թեկնածու էր 1940 թվից):

Հիմնական աշխատանքից չկտրված վերջացնելով Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ընդհատված ասպիրանտուրան և գրելով թեկնածուական դիսերտացիան՝ «Ղվինի ծարտարապետական հուշարձանները» թեմայով, հաջողությամբ այն պաշտպանել է 1946 թվին Լենինգրադի Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության ու ծարտարապետության ինստիտուտի գիտական խորհրդում, ստանալով ծարտարապետության թեկնածուի գիտական աստիճան:

Չկտրվելով գիտական-հետազոտական և մանկավարժական գործունեությունից, սկսած 1945 թվից դրանք զուգակցել է ծարտարապետական հիմնարկություններում աշխատանքի հետ: 1945-1951 թթ. ընթացքում գլխավորել է Հայաստանի ծարտարապետական հուշարձանների պահպանման կոմիտեն, միաժամանակ 1945 թվից մինչև 1948 թիվը եղել է Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդի ծարտարապետության գործերի վարչության պետի տեղակալ: Աշխատանքը վերը նշված հիմ-

նարկություններում նրա համար ստեղծեց Հայաստանի ծարտարապետական հուշարձանների, ինչպես նաև հանրապետությունում նախագծման և շինարարության հարցերի հետ լայնորեն ծանոթանալու հնարավորություն:

1945 թվին հաստատվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ծարտարապետության ամբիոնի վարիչի պաշտոնում, որտեղ և աշխատում է մինչև այժմ: 1951 թվի հունվարից մինչև 1953 թվի սեպտեմբերը համատեղման կարգով զբաղավորել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի պատմության և տեսության սեկտորը:

Վ. Հարությունյանի ծառայություններին պետք է վերագրել նաև հանրապետությունում հուշարձանների պահպանության գործի գիտական կազմակերպումը, նրանց վերականգնումը, ինչպես նաև հաշվառումը և սխտեմավորումը:

Պարբերաբար մասնակցելով հնագիտական արշավախմբերին, նա 1940-ական թթ. հրատարակում է մի շարք աշխատանքներ, որտեղ վեր է լուծում իր հետազոտությունների արդյունքները և կատարում է արժեքավոր հետևություններ: Ղեկավարեց թվում կարելի է նշել «Դվինի 5—7-րդ դդ. ծարտարապետական հուշարձանները» և «Արուժի տաճարի թվագրման առթիվ» գրքերը:

Վերջինը նվիրված էր Արուժի ս. Գրիգոր տաճարին՝ հայ ծարտարապետության 7-րդ դարի լավագույն հուշարձաններից մեկին¹: Հանգամանորեն վերլուծելով Հայաստանի այդ ժամանակաշրջանի պատմա-քաղաքական իրավիճակը, միջնադարյան հայ պատմիչներ Ղևոնդի, Հովհաննես Պրասխանակերտցու, Սամվել Անեցու, Ստեփանոս Տարոնացու և ուրիշների վկայությունները, ինչպես նաև նորովի մեկնաբանելով տաճարի շինարարական արձանագրությունը, հեղինակը գալիս է այն եզրակացության, որ Արուժի տաճարի կառուցման սկիզբը պետք է ընդունել 667-68 թվականները: Չսահմանափակվելով տաճարի կառուցման տարեթվի ճշտումով, Վ. Հարությունյանը հետազոտում է հայ ծարտարապետության ստեղծած և միայն նրան հատուկ «գմբեթավոր դահլիճի» հորինվածքը և նրա

1. В. М. Арутюнян. По поводу датировки храма в Аруче. Ереван, 1946

գարգացման փուլերը մինչև 13-14-րդ դարերը: Վերլուծելով այդ տիպին պատկանող 6—7-րդ դարի հուշարձաններ Պտղավանքի և Արուժի ս. Գրիգոր տաճարի հատակագծային-ծավալային հորինվածքը. Վ. Հարությունյանը նշում է, որ այդ դարերի գմբեթավոր դահլիճներին հատուկ է երկայնաձիգ ուղղանկյուն հատակագիծ՝ 1:2 կողմերի հարաբերությամբ: Այդ դարերի գմբեթավոր դահլիճներին հատուկ է նաև եռանկյունաձև խորշերի առկայությունը միայն արևելյան ճակատում, ինչպես նաև գմբեթի տեղադրությունը կառուցվածքի ճիշտ մեջտեղում: Այնուհետև հետազոտելով 9-14-րդ դդ. գմբեթավոր դահլիճների ծարտաբապետությունը, նա նշում է այդ տիպի հատակագծի համաչափությունների փոփոխման օրինաչափությունը՝ ի տարբերություն 6-7-րդ դդ. կառուցվածքների, 9-11-րդ դդ. և հետագայում նկատվում է կողմերի հարաբերության նվազման տենդենցը: Այսպես, 9-11-րդ դդ. այն հավասար է 1,6:1 և 1,5:1, իսկ 13-րդ դ. այն հասնում է մինչև 1,4:1, նույնիսկ 1,3:1, այսինքն այդ դարերում գմբեթավոր դահլիճների հատակագծերի հորինվածքը հեռանում է 6-7-րդ դդ. հուշարձաններին հատուկ բազիլիք բնույթից և ընդհուպ մոտենում կենտրոնագմբեթ կառուցվածքների հորինվածքին: Այս փոփոխությանը նպաստում է և այն հանգամանքը, որ աստիճանաբար կրճատվում է բեմի առջևի տարածությունը (դասը) և արևելյան զույգ որմնամույթերը համընկնում են բեմի արսիդի պատերին. իսկ արևմտյան կողմում, որմնամույթերի և արևմտյան պատի միջև ընկած տարածությունը փակվում է և դառնում զույգ ավանդատներ: Այս բոլորի հետևանքով 9-13-րդ դդ. գմբեթավոր դահլիճները հեռանում են 6-7-րդ դդ. իրենց նախատիպերից, ներսում ստանալով խաչաձև հորինվածք, չորս անկյունում ավանդատներով: Միաժամանակ զգալի փոփոխություններ են տեղի ունենում նաև հուշարձանների ճակատների մշակման, արտաքին հարդարանքի մեջ: Եթե Արուժում և Պտղնիում եռանկյունաձև խորշեր կան միայն արևելյան ճակատում, ապա հետագայում 9-րդ դարից սկսած, այդ խորշերով մշակվում են արդեն ընդերկայնական պատերը ևս (այս երևույթը հանդես է գալիս Ծիրակավանի տաճարից ըսկըսած), իսկ հետո՝ նաև արևմտյան ճակատը: Ինչպես իրավացի նշում է հեղինակը, այս դեպքում արդեն խորշերը ունեն

զուտ դեկորատիվ նշանակություն՝ ի տարբերություն Արուծի և Պտղնիի տաճարների. որտեղ նրանք թեթևացնում էին բեմի և ավանդատների աբսիդների արանքում ստացվող պատի հոծ զանգվածը: Այնուհետև հեղինակը ուսումնասիրում է Արուծի տաճարի կոնստրուկտիվ առանձնահատկությունները, բացվածքների՝ մուտքերի և լուսամուտների բնույթը և տալիս արտաքին հարդարանքի համեմատական վերլուծությունը 7-րդ դարի հայ ճարտարապետության այնպիսի հանրահայտ հուշարձանների հետ, ինչպիսիք են Ջվարթնոցը, Սիսավանը, Եղվարդի ութաբսիդ եկեղեցին, Թալինի տաճարը, Հոփսիսմե, գալանե տաճարները և այլն: Աշխատությունում հետաքրքրական է նաև Արուծի տաճարի և Ջվարթնոցի, Պտղնավանքի, Ղվինի, Վրաստանի հուշարձաններ Մցխեթի Ջվարիի և Յրոմիի տաճարի պատերին եղած շինարար վարպետների նշանների համեմատությունը, որը ցույց է տալիս այդ նշանների մեծ մասի ընդհանրությունը:

4. Հարությունյանի այս ոչ մեծ, բայց բովանդակալից աշխատությունը մի ավանդ էր միջնադարյան հայ ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում և մինչև օրս չի կորցրել իր թարմությունն ու նշանակությունը:

Գիտնականի հաջորդ մենագրությունը նվիրված էր Հայաստանի հին մայրաքաղաք Ղվինում 1937-1940 թթ. պեղումների հետևանքով հայտնաբերված, 5-7-րդ դարերին վերաբերող ճարտարապետական հուշարձանների հետազոտությանը¹: Հեղինակը 1943-44 թթ. տեղում ստուգել է իր չափագրական նյութը. ընդ որում այդ պրպտումների ժամանակ ի հայտ են եկել եական նորություններ: Հեղինակն անձամբ չափագրել է Ղվինի պաշտամունքային շենքերը, քաղաքացիական կառուցվածքները, կոմունալ շենքերը, ճարտարապետական բազմապիսի բեկորները:

Ղվինի մոնումենտալ շենքերից ամենակարևորը և նշանավորը ս. Գրիգոր կաթողիկեն է: Ըստ պատմիչների տեղեկությունների, մինչև 572 թ. գոյություն է ունեցել ս. Գրիգորի

1 Հնագիտական պեղումներ Հայաստանում, 2, Ղվին, 4, Հարությունյան, Ղվինի 5, 7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950:

մի այլ եկեղեցական շենք, որը կառուցված է եղել 470-ական թթ. կրակապաշտների ատրուշանի տեղում՝ աղյուսից և փայտից: 572 թ. կաթողիկեն հրդեհից ավերվում է: Տաճարի հիմնական վերակառուցումը սկսվում է մարգապան Սմբատ Բագրատունու և Աբրահամ կաթողիկոս Ոջտունու օրով (608-615) ու ավարտվում Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ (615-628): Կաթողիկեի հատակագծի սխեման, Խաչիկ Ռադյանի 1907 թ. կատարած մասնակի պեղումներից հետո մասնագիտական գրականության մեջ է մտել Ի. Ստրժիգովսկու շնորհիվ: Սակայն Վ. Հարությունյանի հետազոտությունը ցույց տվեց, որ այդ հատակագիծն ունի էական անձշտություններ, որոնք աղծառում են հուշարձանի հորինվածքը: Ս. Գրիգորի տաճարի հատակագիծը երկարածիգ համաչափություն ունեցող մի ընդարձակ դահլիճ է, որն ունի $22,5 \times 44,0$ մ. չափերը (արտաքինից): Կառուցվածքի համարյա կենտրոնում կանգնած են չորս հզոր մույթեր, որոնք կրում են գմբեթը: Հատակագծի հորինվածքը կառուցված է լայնակի և երկայնակի զույգ առանցքների նկատմամբ: Արևելքից տաճարն ավարտվում է բեմի արսիդով, որի երկու կողմերում տեղադրված են զույգ ավանդատները: Արսիդը ներսից կիսաշրջանաձև է, դրսից՝ եռանիստ: Տաճարի լայնակի առանցքի ուղղությամբ, հարավից և հյուսիսից տեղադրված են երկու արսիդներ, որոնք ներսից կիսաշրջանաձև են, դրսից բազմանիստ (հնգանիստ): Հեղինակը հատկապես նշում է այն փաստը, որ հարավային արսիդը օրգանապես կապված է հարավային պատի հետ: Այդ նշանակում է, որ տաճարի տվյալ հորինվածքը արդյունք է 608-628 թթ. շինարարությանը: Ինչպես նշում է Վ. Հարությունյանը. «այս հույժ կարևոր հանգամանքը լույս է սփռում այն շատ էական հարցի վրա, որ տաճարների այդ տիպը հանդես է գալիս Հայաստանում հենց 7-րդ դարում»: Հայ ճարտարապետության մեջ 7-րդ դարի կառուցվածքներից Ղվինի տաճարի հորինվածքն ունի Թալինի Մեծ եկեղեցին (7-րդ դարի երկրորդ կես): Հետաքրքրական է, որ Ղվինի և Թալինի նույնատիպ հուշարձանները ունեն հատակագծի միևնույն համաչափությունները՝ մոտ երկու քառակուսի (չափով Ղվինի կա-

թողիկեն ավելի մեծ է՝ այն հայ ճարտարապետության ամենախոշոր կառուցվածքներից է): Միանգամայն իրավացիորեն Վ. Հարությունյանը Ղվինի-Թալինի տաճարների տիպը համարում է որպես ինքնուրույն ճարտարապետական տիպ և նշում, որ այն զարգացել է բազիլիկ ու կենտրոնագմբեթ հատակագծային ձևերի սինթեզի հիման վրա:

Աշխատության մեջ մեծ տեղ է տրված վաղ միջնադարի աշխարհիկ ճարտարապետության մի այնպիսի ուշագրավ և կարևոր հուշարձանին, ինչպիսին է Ղվինի կաթողիկոսական պալատը: Ըստ պատմական տվյալների, Ղվինի պալատը ոչ միայն Հայաստանի կաթողիկոսի բնակարանն էր, այլև եկեղեցական ու քաղաքական հարցեր որոշելու կարևորագույն ժողովատեղի: Այստեղ է իջևանել բյուզանդական կայսր Կոստանդին 3-րդը 652 թ. ձմռանը Հայաստան այցելելիս: Կաթողիկոսական պալատի կառուցման ժամանակի մասին պատմագիրների մոտ չկան ուղղակի տեղեկություններ: Վ. Հարությունյանը, հենվելով պատմիչների մոտ եղած անուղղակի տեղեկությունների վրա, այն թվագրում է 5—6-րդ դդ.:

Պալատի հատակագիծն իրենից ներկայացնում է քառակուսի հորինվածքային առանցքի ուղղությամբ տեղադրված սյունազարդ մեծ դահլիճը, որին հյուսիսային և հարավային կողմերից հարում են հնգական սենյակներ: Սյունազարդ դահլիճը, ըստ հեղինակի չափագրության, եռանավ բազիլիկայի ձև ունի ($26,7 \times 11,4$ մ): Հյուսիսային շարքում պահպանվել են սյուների բոլոր չորս խարիսխները, իսկ հարավայինում՝ միայն մեկը: Պահպանվել է նաև սյուների խոյակներից մեկը, որը «...ամենահետաքրքրական գյուտն էր պեղումների ժամանակ»: Վերլուծելով խոյակի մանրամասերը, հեղինակը ընդգծում է նրա ակնհայտ առնչությունը հունական օրդերի հետ, միաժամանակ նշում, որ այն կերտվել է ոչ թե քարի, այլ փայտի մշակման կանոններին համաձայն:

Աշխատությունում մեծ տեղ է տրված պալատի ծածկի հարցին: Վ. Հարությունյանը, վերլուծելով ողջ շենքի ճարտարապետական հորինվածքը, ներկայացնում է պալատի և նրա ծածկի իր վերակառուցման տարբերակը: Ուշադրություն դարձնելով այն հանգամանքի վրա, որ սյուները դասավորված

են իրարից հավասարապես հեռու ոչ միայն ընդլայնական, այլև ընդերկայնական ուղղությամբ, նա հանգում է այն համոզիչ եզրակացությանը, որ ստացվող երեք քառակուսիները ծածկվել են հայկական ժողովրդական տան գլխատների նման երդիկով՝ «հազարաշեն» ծածկով:

«Դվինի ճարտարապետական հուշարձանները» աշխատությունը ոչ միայն մասնագիտական գրականության մեջ առաջին անգամ ներկայացրեց հին Հայաստանի մայրաքաղաքի միշտ կառույցները, այլև հաստատեց Դվինում պեղումները շարունակելու անհրաժեշտությունը:

1947 թ. լույս տեսավ Վ. Հարությունյանի «Զվարթնոց» գրքուկը, որում հանրամատչելի ձևով ընթերցողների լայն շրջանակների համար ներկայացված է պատմական հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկը՝ Զվարթնոցի տաճարը, ինչպես նաև կաթողիկոսական պալատի համալիրը¹: Սուրբ Գրիգոր կամ Զվարթնոց տաճարը կառուցել է կաթողիկոս Ներսես 3-րդը (641-661), որն իր բոլոր շինարարական գործունեության համար ստացել էր «Ծինող» մականունը: Գրքուկում հանգամանորեն խոսվում է տաճարի ճարտարապետության առանձնահատկությունների, հին Հայաստանի մշակույթում նրա ունեցած կարևոր նշանակության մասին, տրվում է հուշարձանի հորինվածքի վերլուծությունը, ելնելով Թ. Թորամանյանի վերակազմությունից: Հեղինակը նշում է, որ Զվարթնոց տաճարը, լինելով հայ եկեղեցական ճարտարապետության նոր տիպ, Հայաստանում վաղօրոք ստեղծված կենտրոնազմբեթ տիպի եկեղեցիներից փոխ է առել նրանց հիմնական ներքին ձևը՝ հավասարակողմ խաչը: Սակայն այդ խաչը, քրիստոնեական կրոնի խորհրդանիշը այստեղ ներգծված է ոչ թե ուղղանկյան մեջ, այլ կլոր, դրսից բազմանիստ ձևի մեջ: Խաչի կիսաշրջանաձև կողմերի միացման տեղերում կառուցված էին հզոր մույթեր, որոնց հետևում, դեպի արտաքին պատը կանգնած էին մեկական սյուն, պսակված հին Հայաստանի պետական զինանշանն արտահայտող թևատարած արծվաքանդակ խուլակներով: Այս չորս սյուները, շրջանի մեջ

1 Վ. Հարությունյան, Զվարթնոց, Երևան, 1947:

ներգծվում խաչի կիսաշրջանաձև թևերի միջին մասերի հետ միասին կազմում էին տաճարի երկրորդ հարկի պատերը պահող կլոր հիմքը: Ներսի կիսասյունները և նրանց միացնող կամարները իրենց վրա կրում էին երրորդ հարկը կազմող զգմբեթն ու թմբուկը: Այսպիսով տաճարն ուներ եռահարկ, ուղղաձիգ առանցքի շուրջը կենտրոնացած միասնական մի ծավալ, հոլակապ ու մոնումենտալ ուրվագծով: Նման յուրօրինակ հորինվածքը 7-րդ դարի Հայաստանի ճարտարապետության համար միանգամայն նորույթ էր: Բացառիկ հարուստ էր տաճարի հարդարանքը: Վ. Հարությունյանը իրավացիորեն նշում է, որ Ջվարթնոցը հսկայական ազդեցություն է ունեցել հայ ճարտարապետության հետագա զարգացման վրա: Հայաստանում 7-րդ դարի երկրորդ կեսում կառուցված հուշարձանները, չնայած իրենց հորինվածքով տարբերվում են Ջվարթնոցից, այնուամենայնիվ կրում են վերջինիս ճարտարապետական ձևերի ուժեղ ազդեցությունը: Իսկ Ջվարթնոցի անմիջական օրինակով Անդրկովկասում կառուցվեցին նույն տիպի պատկանող Բանակի տաճարը Տայքում, Լյակիթի եկեղեցին պատմական Աղվանքում, և 11-րդ դարում՝ Գագիկ Առաջին թագավորի հրամանով փաստորեն այն կրկնվեց Անիում: Իսկ Ն. Մառի ղեկավարությամբ կատարվող Անիի Գագկաշեն եկեղեցու պեղումների ժամանակ հայտնաբերվեց Գագիկ թագավորի արձանը՝ ձեռքերում բռնած իր կառուցած եռահարկ եկեղեցու մոդելը, որը փայլուն կերպով ապացուցեց մինչ այդ Թ. Թորամանյանի կատարած Ջվարթնոց տաճարի վերակազմությունը:

Վ. Հարությունյանի «Ջվարթնոց» գրքովը ռուսերեն վերահրատարակվեց 1954 թ., հնարավորություն ընձեռնելով Թորեն բովանդակ երկրի հասարակությանը ծանոթանալու Ջվարթնոցի ճարտարապետությանը և կառուցման պատմությանը¹:

Վ. Հարությունյանի գիտական հետազոտությունները հենվում են ճարտարապետական հուշարձանների լայն և բազմա-

1. В. Арутюнян, Звартиноц, Ереван, 1954

կողմանի ուսումնասիրության. նրանց մանրակրկիտ չափազերման, պեղումներից հայտնաբերված նոր նյութերի վրա: Հայ շինարվեստի առանձին խնդիրների ու հուշարձանների հետազոտման ասպարեզում զգալի փորձ կուտակելով, Վ. Հարությունյանը (պրոֆեսոր Ս. Սաֆարյանի հետ համատեղ) ձեռնարկեց Հայաստանի ծարտարապետության կազմավորման և զարգացման պրոցեսին (ինագույն ժամանակներից մինչև 20-րդ դարը) նվիրված աշխատության ստեղծմանը: 1951 թ. Մոսկվայում ռուսերեն հրատարակվեց հեղինակների «Հայ ծարտարապետության հուշարձանները» գիտական բարձր մակարդակով գրված, հարուստ պատկերազարդումով գիրքը¹: Աշխատությունը մինչև այդ լույս տեսած, հայ ծարտարապետությանը նվիրված ընդհանուր բնույթի գրքերից շահավետ տարբերվում էր նյութի ընդգրկման հարցում: Եթե մինչև այդ հետազոտողները Հայաստանի ծարտարապետության պատմությունը սկսում էին 4-րդ դարից՝ երկրում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո և փաստորեն հասնում էին մինչև 14-րդ դարը, ապա Վ. Հարությունյանը և Ս. Սաֆարյանը ներկայացնում են՝ ճիշտ է համառոտ, Հայաստանի տարածքի նախնադարյան շինարվեստը (մեգալիթյան հուշարձանները, կիկլոպյան ամրոցները), Ուրարտուի ծարտարապետական հուշարձանները, ինչպես նաև Հայաստանի հելլենիստական դարաշրջանի ծարտարապետությունը: Նման մոտեցումը միանգամայն ճիշտ էր, որովհետև իրոք Հայաստանի ինքնատիպ և բարձր կատարելության հասած միջնադարյան ծարտարապետությունը զարգացել է տեղական, նախահայկական մշակույթի հիման վրա, դառնալով հայկական լեռնաշխարհի նախաուրարտական, ուրարտական և հելլենիստական Հայաստանի կուլտուրայի նվաճումների արժանի ժառանգը:

Գրքի ներածական մասում տրվում է Հայաստանի ծարտարապետության ընդհանուր պատմությունը, որտեղ զգալի տեղ են գրավում 7-րդ դարի հուշարձանները: Եթե մինչև 7-րդ դարը Հայաստանում կառուցվածների տարածված տիպերն էին միանավ դահլիճներն ու եռանավ բազիլիկները, ապա 6-րդ

В.М. Арутюнян и С. А. Сафарян Памятники Армянского зодчества Москва. 1951

դարի վերջից հայ ճարտարապետները մեկը մյուսի ետևից մը-
շակում էին գմբեթավոր կառուցվածքների բազմաթիվ տիպեր,
գմբեթավոր բազիլիկներ, փոքր խաչաձև եկեղեցիներ. տետ-
րակոնսներ, գմբեթավոր դահլիճներ. բազմաբսիդ եկեղեցիներ,
զվարթնոցատիպ տաճարներ, Ավան-Հոփսիմեի, Մաստարայի,
Էջմիածին-Բագարանի, Թալինի Մեծ տաճարի տիպերը և այլն:
Նշված հորինվածքների մի մասը հանդիսանում է հայ ճար-
տարապետության արգասիքը: Այսպես, օրինակ, դեռ 6-րդ դա-
րում գմբեթավոր դահլիճի հորինվածքը. որի հիանալի օրի-
նակներ են Պտղնավանքը (6-րդ դարի վերջին քառորդ) և
Արուծի տաճարը (7-րդ դ.), հատուկ է միայն Հայաստանի
ճարտարապետությանը: Գմբեթավոր դահլիճի հորինվածքը
շահավետ տարբերվելով այդ շրջանի գմբեթավոր բազիլիկնե-
րից ներքին տարածության միասնությամբ, ապացուցեց իր
կենսունակությունը և հետագայում՝ 9-14-րդ դարերում դար-
ձավ հայ ճարտարապետության մեջ կիրառվող ամենատարած-
ճարտարապետության ավանդն են հանդիսանում Ավան-Հոփսի-
մեում տարածում գտավ Եվրոպայում՝ առաջին հերթին Հունաս-
տիմեի. Մաստարայի, Էջմիածին-Բագարանի տիպերը: Վերջի-
նըս դուրս եկավ Հայաստանի սահմաններից և 9-14-րդ դարե-
րում տարածում գտավ Եվրոպայում՝ առաջին հերթին Հունաս-
տանում (Աթոս-լեռան վանքերը), Ֆրանսիայում և Իտալիա-
յում:

Աշխատության կարևոր արժանիքներից են 17-19-րդ դարե-
րի ճարտարապետության բաժինը: Եթե հայ ճարտարապետու-
թյան պատմության աշխատությունների մեծ մասը ավարտ-
վում էր 14-րդ դարով (Տոկարսկի), կամ համառոտ ներկա-
յացվում էր նաև 17-րդ դարի ճարտարապետությունը, ընդ ո-
րում որակվելով որպես անկումային (Յակոբսոն, Բուսիաթյան
և Յարալով), ապա այստեղ փաստորեն առաջին անգամ ներ-
կայացվում էր Հայաստանի ուշ միջնադարի ճարտարապետու-
թյունը ընդհուպ մինչև 20-րդ դարը, մինչև խորհրդային կար-
գերի հաստատումը: Հատկապես կարևոր է ժողովրդական բը-
նակելի տան ճարտարապետության հատվածը (գրված Կ.
Հովհաննիսյանի մասնակցությամբ), որտեղ ամփոփ տրված է
Հայաստանի տարբեր շրջանների՝ լեռնային, հարթավայրային,
ինչպես և քաղաքային տիպի ժողովրդական բնակելի տները:



Հիշատակ որբանոցային տարիներից, 1916 թ.
աջից՝ Վ. Հարությունյան



Հիշատակ փողոցային
տարիներից, 1920-21 թթ.



Այց որբանոցին 50 տարի անց, 1965 թ.




Միջնակարգի շրջանավարտը 1927 թ.




Ուսուցիչը, 1930 թ.




Աշակերտները հետ, Արմիշ, 1930 թ.





Ուսանողական խմբով ավերակների մոտ. առաջին պլանում Ջաբր. Սիբ. Մազմանյան, 1934 թ.





Դվինի հնագիտական արշավախմբի կազմում. առաջին շարքում՝ պրոֆ. Ս. Տեր-Ավետիսյան, Բ. Առաքելյան, երկրորդ շարքում՝ Վ. Հարությունյան, Հ. Մնացականյան, 1939 թ.




Ճարտարապետության կաբինետում 1960 թ.






Ուսանողների հետ, 1955 թ.



Հուլիսի 2-ին Կապույտի պալատում հայկական ընկերության ինժեների համագումար, 1964 թ.







Օլիմպիայի ավերակներում, 1957 թ.



Վենետիկի ս. Մարկոսի հրապարակում Ռ Ջարյանի և Ս. Բալանդուրի հետ, 1958 թ.



Հոռո, Մեգարիմիու Մեգերի հաղթական մուր, 1958 թ.



Պոմպի գլխավոր ֆուրմիու, 1958 թ.



Հոռն, ս. Պետրոսի հրապարակում, Ռ Ջաղանի, Ս. Ստեփանյանի և
Ս. Բալանդուրի հետ, 1958 թ.



Ֆլորենցիայում, 1958 թ.



Գիզեի բուրգերի մոտ, 1968 թ.




Պալմիրայի տաճարի մոտ, 1968 թ.



Բաբելոնի ավերակներում, 1968 թ.



Լիճաճան, Այնճաբի ավերակներում, պրոֆ. Ն. Գալալյանի հետ, 1968 թ.



Հայ երեխաների հետ Ալմադում, 1968 թ.



Դասախոսության պահին բեյութում, 1968 թ:



Թորոս Թորամանյանի անվան
մրցանակի տվչության արարողությունը, Զվարթնոցում, 1978 թ.





ՄԱՍՆ ճարտարապետների միության 6-րդ համագումարում, 1975 թ.
 Մասնակցություն է ունենում ԽՍՀՄ ճարտարապետների միության 6-րդ համագումարում, 1975 թ.
 Մասնակցություն է ունենում ԽՍՀՄ ճարտարապետների միության 6-րդ համագումարում, 1975 թ.

ԽՍՀՄ ճարտարապետների միության 6-րդ համագումարում, 1975 թ.

«Հայ Ճարտարապետության հուշարձանները» գրքը եղավ ներդրում ճարտարապետական գրականության մեջ, բնորոշելով Վ. Հարությունյանին որպես այդ բնագավառի իսկական գիտակի:

1950-ական թվականներին Վ. Հարությունյանը գրեց նաև մի շարք գիտահանրամատչելի գրքուկներ, որոնք դրսևորեցին հեղինակին որպես հայ ճարտարապետության եռանդուն պրոպագանդիստի¹:

Վ. Հարությունյանի նշելի գծերից է հանդիսանում նաև այն, որ նա հիմնականում զբաղվելով Հայաստանի հին և միջնադարյան ճարտարապետության խնդիրներով, արդյունավետ կերպով զուգակցում է իր այդ աշխատանքը ժամանակակից ճարտարապետության հարցերի հետազոտության հետ:

Դրան նվիրված են ամսագրերում և թերթերում լույս տեսած Վ. Հարությունյանի բազմաթիվ հոդվածները, դասախոսությունները և ելույթները: Հայ խորհրդային ճարտարապետության ընդհանրացմանն է նվիրված 1955 թ. հրատարակված «Խորհրդային Հայաստանի ճարտարապետությունը» մենագրությունը (Վ. Հովհաննիսյանի հետ միասին)²: Հիշյալ գիրքը հանդիսանում է Հայաստանում խորհրդային ճարտարապետության կազմավորման և զարգացման պատմական պրոցեսի գիտական սխտեմավորման առաջին փորձը:

Հազարամյակների ընթացքում Հայաստանի մշակույթում ճարտարապետությունը միշտ էլ կարևորագույն տեղ է գրավել: Մեզ հասած մոնումենտալ կառուցվածքները վառ կերպով արտահայտում են հայ ժողովրդի ազգային ինքնատիպությունը ու բարձր մշակույթը: Սակայն հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ առանձնապես հատկանշական է վերջին կես դարը, որի ընթացքում ստեղծվեց միանգամայն նոր, հայ խորհրդային ճարտարապետությունը: Ժողովրդի կյանքի վերափոխումը սոցիալական նոր հիմքի վրա, հանրապետության ինդուստրացումը, քաղաքների ու գյուղերի սոցիալիստական վերակառուցումը պայմանավորեցին ճարտարապետության

1 Վ. Հարությունյան, Ալեքսանդր Թամանյան, Երևան, 1959:

Վ. Հարությունյան, Թորոս Թորամանյան, Երևան, 1959:

2 В.М. Арутюнян, К.Л. Оганесян, Архитектура Советской Армении, Ереван, 1955.

2. Վարազդատ Հարությունյան

Հայկական խորհրդային ԽՍՀ-ում: Ահա դրան է նվիրված Վ. Հարությունյանի և Վ. Հովսեփյանի մենագրությունը, որտեղ Վ. Հարությունյանի գրչին է պատկասում այդ գրքի երկու գլուխները՝ «Խորհրդային Հայաստանի ծարտարապետությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» և «Խորհրդային Հայաստանի ծարտարապետությունը հետպատերազմյան տարիներին» խորագրով:

Հայաստանում խորհրդային կարգերը հաստատվելուց հետո երկու տասնամյակի ընթացքում տևած բուռն շինարարության հետևանքով անճանաչելիորեն փոխվեց Հայաստանի քաղաքների ու գյուղերի կերպարը: Ստեղծվեց հայ խորհրդային ծարտարապետական դպրոցը, որի հիմնադիրը եղավ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը: Նրա անվան հետ անխզելիորեն կապված է Խորհրդային Հայաստանի ծարտարապետության բոլոր հաջողությունները վերջինիս ձևավորման և զարգացման տարիներին: Սակայն Հայրենական մեծ պատերազմը ընդհատեց խորհրդային ժողովրդի խաղաղ ստեղծագործ աշխատանքը, դանդաղեցրեց ծարտարապետության զարգացման ընթացքը: Բայց ծարտարապետական մտքի ստեղծագործ պրպտումները Հայաստանում չդադարեցին: Պաշտպանական բնույթի աշխատանքներից բացի (կամուրջներ, թունելներ, նոր մայրուղիներ և այլն), ստեղծում էին գեղարվեստական նոր ձևեր կարևորագույն թեմայի՝ խորհրդային հայրենասիրության մարմնավորման համար: Վ. Հարությունյանը գրքում հանգամանորեն ներկայացնում է այդ բնագավառում հայ ծարտարապետների ստեղծագործական նվաճման արդյունք աղբյուր հուշարձանները: Խորհրդային Հայաստանում հայրենասիրության թեման իր մարմնավորումը գտավ ինքնատիպ և լուրջի-նակ մեմորիալ-ուտիլիտար կառուցվածքների՝ աղբյուր-հուշարձանների մեջ: Հայ ծարտարապետները, օգտագործելով հին Հայաստանի շինարվեստի ավանդական ժանրերից մեկը՝ աղբյուրները, ստեղծեցին հուշարձանի միանգամայն նոր տիպ, որի մեջ ոչ մեծ կառուցվածքի մոնումենտալ ձևերը զուգակցվում են անմահության սիմվոլ ջրի հետ:

«Խորհրդային Հայաստանի ծարտարապետությունը» գրքում զգալի տեղ է հատկացված հետպատերազմյան երկու հնգամյակի տարիներին: Վ. Հարությունյանը մասնագիտական խոր

վերլուծությամբ ներկայացնում է այդ ժամանակաշրջանի քաղաքաշինական աշխատանքները Հայաստանի մայրաքաղաք Երևանում, ինչպես նաև Լենինականում, Կիրովականում, Ալավերդիում, բազմաթիվ նորաստեղծ բնակավայրերում և գյուղերում: Ծարտարապետական նոր անսամբլների հետ ներկայացված են հայ խորհրդային ծարտարապետության զարգացման պատմության մեջ կարևոր տեղ գրավող հասարակական շենքերը: Մեծ տեղ է տված բնակելի շենքերի ծարտարապետությանը: Նշելով այդ բնագավառում եղած նվաճումները, Վ. Հարությունյանը միևնույն ժամանակ այդ թեմային նվիրված մասնագիտական գրականության մեջ առաջին անգամ ընդգծում է այն խոշոր թերությունները, որ տեղ են գտել Հայաստանում հետպատերազմյան տարիների բնակելի շենքերի ծարտարապետության մեջ:

Այս աշխատությունը լրացրեց հայկական ծարտարապետության պատմության մեջ եղած բացը և ուղի հարթեց խորհրդային Հայաստանի ծարտարապետությանը նվիրված հետագա ուսումնասիրությունների ստեղծման համար:

Վ. Հարությունյանի գիտահետազոտական աշխատանքի մեջ արժեքավորը հանդիսանում է այն, որ նա ուշադրություն է դարձնում հայկական ծարտարապետության չուսումնասիրված հարցերի վրա:

Ծարտարապետության այնպիսի բնագավառ ինչպիսին աշխարհիկ ծարտարապետությունն է, ինչպես նաև հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմությունը, դարձան «Միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ծարտարապետությունը» նրա մեծածավալ մենագրության թեման, որը հեղինակի կողմից հրատարակվում է առանձին մասերով, հոդվածներով և գրքերով: 1960 թ. լույս տեսավ միջնադարյան Հայաստանի քարավանատներին ու կամուրջներին նվիրված գիրքը¹, որը կազմում է մենագրության բաղկացուցիչ մասը:

Անձամբ ուսումնասիրելով և չափագրելով միջնադարյան աշխարհիկ ծարտարապետության այդ հետաքրքրական կա-

¹ Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960:

ռուցվածքները, հեղինակը գիտական շրջանառության մեջ է դնում բազմաթիվ հուշարձաններ, որոնք մինչ այդ անհայտ էին մասնագիտական գրականության մեջ: Հայաստանը դարեր շարունակ լինելով Արևելքի և Արևմուտքի առևտրական, մշակութային կապերն իրականացնող օղակը, հնուց ի վեր հայտնի էր իր տարանցիկ ծանապարհներով և նրանց վրա շինված քարավանատներով ու ինժեներական կառուցվածքներով: Հայկական կամրջաշինության մեջ ցայտուն դրսևորվել է հայ ծարտարապետների բարձր վարպետությունը ինժեներական բարդ խնդիրների լուծման ասպարեզում: Սրա ապացույցն են Հայաստանի խոշոր գետերի վրա կառուցված տասնյակ մետրանոց թռիչքներ ունեցող կամուրջները: Հեղինակը բազմակողմանի համեմատական վերլուծությամբ հիմնավորում է, որ միջին դարերում կամրջաշինությունը Հայաստանում անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա էր գտնվում, քան հարեվան երկրներում և ընդհանրապես Արևելքում:

4. Հարությունյանի 1960-ական թվականների ուսումնասիրությունների շարքում ամենանշանակալիցը «Քաղաքաշինությունը հին և միջնադարյան Հայաստանում» խորագիրը կրող սովորաբաժավ մենագրությունն է, որ հեղինակը որպես դիսերտացիա 1964 թ. հաջողությամբ պաշտպանում է Լենինգրադի Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության և ծարտարապետության ինստիտուտում ու ստանում ծարտարապետության դոկտորի գիտական բարձր աստիճան: Դեռևս լրիվ չիրատարակված այս աշխատության առանձին մասերը տպագրվել են Խորհրդային Միության մասնագիտական պարբերականներում, ինչպես նաև արտասահմանում (Փարիզ, REA RM տարեգիրք):

Այս աշխատության հետ է առնչվում 1964 թ. լույս տեսած «Անի քաղաքը» գիրքը (հայերեն և ռուսերեն լեզուներով), որը նվիրված է միջնադարյան Հայաստանի հուշակավոր մայրաքաղաքի հազարամյա հոբելյանին¹:

Աշխատությունում հեղինակը նշում է հայ ժողովրդի պատմության մեջ Անիի ունեցած անգնահատելի նշանակությունը, համարելով որպես միջնադարյան քաղաքաշինական

¹ 4. Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964:

բացօթյա մի թանգարան, որպես քաղաքային աշխարհիկ և եկեղեցական ծարտարապետության կազմավորման ու զարգացման կարևորագույն օրրան: Անիի հոբեյանին նվիրված այդ գիրքը շարադրված է հնագիտական պեղումների, պատմագրական նյութերի, Անին հետազոտած գիտնականների ուսումնասիրությունների հիման վրա և մասնագիտական վերլուծության է ենթարկվում նրա քաղաքաշինական սկզբունքներն ու առանձնահատկությունները, հայ ժողովրդի մշակութային ժառանգությունում մեծ արժեք ունեցող ծարտարապետական հուշարձանները: Գրքում հանգամանորեն խոսվում է Անիի առաջացման և կառուցապատման պատմության, նրա տեղադրության և հատակագծային կազմության մասին: Առանձին գլուխներում ներկայացված են քաղաքի պաշտպանական կառուցվածքները, կոմունալ տնտեսության և բարեկարգման տարրերը, պաշտամունքային և աշխարհիկ շենքերը: Հատկապես ուշադրություն է դարձված Անիի քաղաքաշինությանը, որովհետև, ինչպես իրավացի նշում է հեղինակը, այժմ, երբ Հայաստանի միջնադարյան բազմաթիվ քաղաքների հատակագծման սկզբունքների և ծարտարապետության առանձնահատկությունների մասին մենք շատ աղքատիկ տվյալներ ունենք, Բագրատունյաց թագավորության երբեմնի մայրաքաղաքի նյութերը ստանում են գիտական առանձնահատուկ նշանակություն:

Գրքի արժանիքների շարքում պետք է դասել և այն, որ գրված լինելով մասնագիտորեն միաժամանակ այն մատչելի է ընթերցողների լայն շրջանակների համար, պատկերացում տալով վաղուց լքված, մեզ այնքան մոտ, բայց այժմ անմատչելի դարձած հին Հայաստանի մայրաքաղաքի մասին:

1968 թ. Մոսկվայում լույս տեսավ «Երևան» գիրքը (հեղինակներ Վ. Հարությունյան, Մ. Հասրաթյան, Ա. Մելիքյան). որը նվիրված է Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքի հիմնադրման 2750 ամյակին¹:

Գրքում առաջին անգամ ներկայացված է Երևանի ծարտարապետական զարգացումը սկսած Ուրարտուից մինչև մեր օրերը: Առաջին գլուխը (Վ. Հարությունյան) ծանոթացնում է Էրեբունի-Երևանի ծագման և զարգացման պատմությանը, քաղաքի տարածքում գտնվող մ.թ.ա. 4-րդ-3-րդ հազարամյակնե-

րում գոյություն ունեցող շենգավիթյան քնակատեղիի հետ, ապա հանգամանորեն խոսվում ուրարտական Հայաստանի երկու ամրոցների՝ Էրեբունիի և Թեշեբաինի ծարտարապետության մասին:

Գրքում միանգամայն համոզիչ հիմնավորում է այն թեզը, որ Երևանում շինարարական-ծարտարապետական կյանքը անընդհատ հարատևել է Ուրարտուից մինչև մեր օրերը:

Հատկապես հետաքրքրական է աշխատության առաջին գլխի այն հատվածը, որը նվիրված է ուշ միջնադարի Երևանի ծարտարապետությանը: Այստեղ Վ. Հարությունյանը նորահայտ արխիվային նյութերի հիման վրա, որոնք առաջին անգամ են գիտական շրջանառության մեջ դրվում, տալիս է Երևանի հատակագծային կառուցվածքը, և նրա բաղկացուցիչ մասերը, կառուցապատման քնույթը և քնակելի, հասարակական ու պաշտամունքային կառուցվածքների ծարտարապետությունը:

Գրքի հաջորդ գլուխները նվիրված են սոցիալիստական Երևանին: Վերջին գլուխը, որը նվիրված է Երևանի ապագային, նույնպես պատկանում է Վ. Հարությունյանի գրչին: Այստեղ ընթերցողը ծանոթանում է Հայաստանի մայրաքաղաքի զարգացման հեռանկարներին, Երևանի նոր գլխավոր հատակագծին, կենտրոնի վերակառուցման նախագծին, ինչպես նաև կառուցվող և նախագծված խոշոր հասարակական շենքերին, որոնք կզարդարեն քաղաքամայր Երևանը մոտ ապագայում, անձանաչելիորեն փոխելով նրա կերպարը:

Նույն 1968 թ. լույս տեսավ Վ. Հարությունյանի երկու նոր աշխատությունները՝ «Էջմիածնի ծարտարապետական հուշարձանները»¹ և «Հայկական ծարտարապետության պատմության մի քանի հարցերի մասին» (Բ. Առաքելյանի և Ս. Մնացականյանի հետ համատեղ)²:

Այս աշխատությունում, որը գրված է Գ. Չոբինաշվիլու

1 В.М. Арутюнян, Архитектурные памятники Эчмиадзина. Ереван. 1968.

Б.Н. Аракелян, В.М. Арутюнян, С.Х. Минаканян, О некоторых вопросах истории армянской архитектуры, Ереван. 1969.

1. В.М. Арутюнян, М.М. Асратян, А.А. Мелikian, Ереван, Москва 1968

«Որոշումներ հայկական ճարտարապետության բնագավառում» գրքի առթիվ, Վ. Հարությունյանը շարադրել է «Հայաստանի գմբեթավոր բազիլիկների մասին», «Հայաստանի գմբեթավոր դահլիճները» և «Թալինի մեծ տաճարը» գլուխները: Գմբեթավոր բազիլիկներին նվիրված բաժնում հեղինակը տալիս է այդ տիպի գեներալը Հայաստանում:

Նշելով, որ Հայաստանում գմբեթավոր բազիլիկի տիպը երևան եկավ 5-րդ դարի վերջում (Տեկոր), շարունակվեց 6-րդ դարում (Օձունի տաճար) և իր կատարելությանը հասավ 7-րդ դարում (Գայանե, Բագավան, Մրեն), Վ. Հարությունյանը համեմատաբար մանրամասն կանգ է առնում Օձունի տաճարի ճարտարապետության վերլուծության վրա և հիմնավորում վերջինիս 6-րդ դարի 2-րդ կեսում կառուցված լինելը: Գմբեթավոր դահլիճներին նվիրված գլխում Վ. Հարությունյանը անդրադառնում է Պտղնիի և Արուժի տաճարների ճարտարապետական առանձնահատկություններին, հիմնավորելով առաջինի թվագրումը 6-րդ դարի վերջով, իսկ երկրորդին՝ 667/68 թթ.: Խոսելով Թալինի մեծ տաճարի մասին, հեղինակը ընդգծում է այդ ճարտարապետական տիպի զուտ հայկական ծագումը, ընդգծելով, որ այն որպես նախատիպ ունի Ղվինի կաթողիկեն (608—628 թթ.):

1972 թ. Մոսկվայում լույս տեսավ «Խորհրդային Հայաստանի ճարտարապետությունը» ակնարկը (հեղինակներ Վ. Հարությունյան, Մ. Հասրաթյան, Ա. Մելիքյան)¹: ԽՍՀՄ-ի կազմավորման 50-ամյակին նվիրված այս գրքում համառոտ տրված է հայ ճարտարապետության զարգացման պատմությունը հինագույն ժամանակներից մինչև մեր օրերը (Վ. Հարությունյանը գրքի առաջին՝ «Անցյալի ժառանգությունը» վերնագրով գլխի հեղինակն է):

1975 թվին՝ մեծ եղեռնի 60-ամյակի օրերին Բելրուքում լույս տեսավ Մորուս Հասրաթյանի և Վարազդատ Հարություն-

¹ В. М. Арутюнян, Н. М. Асратян, А. А. Меликян, Архитектура Советской Армении, Москва 1972.

յանի «Հայաստանի հուշարձաններ», ջքեղ պատկերազարդ գիրքը՝ հայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով: Այդ գիրքն ունի իր ստեղծման հետաքրքիր պատմությունը: Հալեպի Սարյան ակադեմիայի նախագահ, անվանի ակնաբույժ և հասարակական գործիչ Որբերտ Ծեպեճյանը բելլուսահայ արվեստագետ-լուսանկարիչ Վազգեն Թութունճյանի հետ մտահղացան և կազմակերպեցին Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձաններին նվիրված ցուցահանդես, որը շրջեց ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Եվրոպայում: Մեզալիթյան կոթողներից մինչև 17-րդ դ. հայկական հուշարձանները բարձրորակ գունավոր լուսապատկերներ պարունակող ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն և խանդավառություն առաջացրեց սփյուռքահայության մեջ: Ցուցահանդեսի հաջողությունը պատճառ եղավ, որ Բելլուսի Թեքեյան մշակութային միության հովանավորությամբ և բարերար Վարապետ Պապահեքյանի նյութական օժանդակությամբ ստեղծվեց այս ստվարածավալ և գեղատիպ հատորը: Գրքում հայկական ճարտարապետության պատմության ակնարկը գրել է Մորուս Հասրաթյանը, իսկ շուրջ յոթանասուն հուշարձանի (որոնք ներկայացվում են գունավոր լուսանկարով և հատակագծով) տեքստերը գրել է Վարազդատ Հարությունյանը: Երեք լեզվով տված այս բացատրությունները պատկերացում են տալիս հայկական ճարտարապետության յոթ տասնյակ լավագույն և հանգուցային հուշարձանների, նրանց կառուցման ժամանակաշրջանի, ոճական առանձնահատկությունների և հայ մշակույթի մեջ ունեցած նրանց տեղի ու դերի մասին: Գրքի վերջում կա հայկական ճարտարապետության մատենագիտությունը, միջնադարյան հայկական ճարտարապետության մեջ կիրառված շենքերի տիպերի աղյուսակը՝ տիպեր, որոնց զգալի մասը ստեղծվել է հենց Հայաստանում: Այդ կոթողները կերտած հայ անանուն վարպետներին ծոնված «Հայկական հուշարձաններ» գիրքը կարևոր նշանակություն ունեցավ և այժմ էլ դեռ ունի

2. Մ. Հասրաթյան, Վ. Հարությունյան, Հայաստանի հուշարձաններ, Բելլուս, 1975 (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն):

Սփյուռքի հայության և հայ մշակույթով հետաքրքրվող օտար-ներին Հայաստանի ծարտարապետական ժառանգությանը ծա-նոթացնելու շնորհակալ գործում:

1978 թ. պրոֆեսոր Վ. Հարությունյանը հրատարակեց «Հին աշխարհի ծարտարապետությունը» խորագրով ուսումնական ձեռնարկը, որը հեղինակի կողմից տասնամյակների ընթացքում երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում կարդացած դասախոսությունների շարադրանքն էր¹: Դրանով լրացվեց հայերեն լեզվով ծարտարապետության համընդհանուր պատմության դասագրքի բացը, որի պահանջը վաղուց էր զգացվում: Վ. Հարությունյանը այցելելով դասական ծարտարապետության հուշարձաններով հարուստ երկրները (Եգիպտոս, Հունաստան, Իտալիա, Սիրիա և այլն), հնարավորություն է ունեցել տեղում անձամբ ծանոթանալու ձեռնարկում ներկայացվող շատ կառույցներին, համալիրներին ու քաղաքներին, սեփական դիտարկումներով ու ուսումնասիրություններով հարստացրել է շարադրանքը, տեղում կատարած լուսանկարներով լրացրել ձեռնարկի պատկերազարդումները:

Գիրքն իր բովանդակությամբ, նյութերի մատուցման հաջորդականությամբ համապատասխանում է ծարտարապետության համընդհանուր պատմության վաղագույն փուլի գիտական, միաժամանակ հանրամատչելի շարադրանքին ներկայացված պահանջներին: Կուռ և տրամաբանական են տեքստի ենթաբաժանումներն ըստ գլուխների՝ Նախնադարյան-համայնական հասարակության, հին արևելյան բունապետական երկրների (որտեղ իր արժանի տեղն ունի ուրարտական Հայաստանի շինարարական արվեստը), Հարավային և Արևելյան Ասիայի երկրների, Հին Ամերիկայի, Հին Հունաստանի ու Հին Հռոմի ծարտարապետությունը: Ձեռնարկը եզրափակում է «Անտիկ ծարտարապետության օրրանները ԽՍՀՄ-ում», գլուխը, որտեղ ներկայացված է Հայաստանի, Վրաստանի, Միջին Ասիայի, Սև ծովի ափերի քաղաքների ծարտարապետությունը: Այն լինելով կարևոր և արժեքավոր, հաճախ թերագնահատվել կամ

1. Վ. Հարությունյան, Հին աշխարհի ծարտարապետությունը, Երևան, 1978:

ուղղակի չի ընդգրկվել ճարտարապետության համընդհանուր պատմությանը նվիրված աշխատանքներում: Վ. Հարությունյանի այս գիրքը այն եզակի գործերից է, որտեղ հայ հեղինակը դուրս է գալիս իր երկրի մշակույթի շրջանակներից և քննարկում համաշխարհային չափանիշով դասական՝ հին աշխարհի ճարտարապետության խնդիրները:

Վ. Հարությունյանի գրչին պատկանող մեծաթիվ գիտական աշխատությունների շարքում առանձնանում է «Հայ ժողովրդի քարակերտ տարեգրությունը»¹: Այս հիմնարար աշխատանքը երախտաշատ գիտնականի կեսդարյա ուսումնասիրությունների հանրագումարն է, որը միութենական ընթերցող հասարակությանը հաղորդակից է դարձնում հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգությանը՝ նրա ակունքներից սկսած մինչև 20-րդ դարը:

Խորհրդանշական է մենագրության վերնագիրը՝ իսկապես, մեր ճարտարապետական հուշարձանները հայ բազմադարյան մշակույթի նվաճումների քարակերտ տարեգրությունն են ու ակնառու ապացույցը: Զաղաքակիրթ աշխարհը Հայաստանը և հայ ժողովրդին, առաջին հերթին, ծանաչում է միջնադարյան ճարտարապետությամբ, ապա գրականությամբ և մանրանկարչությամբ: Ահա ազգային ճարտարապետության ու քաղաքաշինության արժանիքների բացահայտումն է, որ կազմում է Վ. Հարությունյանի գրքի շարադրանքի առանցքը: Հուզիչ է, որ հեղինակը «Հայ ժողովրդի քարակերտ տարեգրությունը» գիրքը ծոնել է իր մեծ ուսուցչին՝ հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանի հիշատակին, որի գործի շարունակողներից մեկն է ինքը:

Գրքում մատչելի, համառոտ, բայց մանրամասնորեն տրվում է Հայաստանի շինարարական արվեստի ստեղծման, կազմավորման ու ձևավորման, զարգացման փուլերի ընդհանուր պատկերը: Այսպիսի լայն ընդգրկման համար հիմք է ծառայել ինչպես հեղինակի բազմամյա ուսումնասիրությունների, այնպես էլ հայրենական և արտասահմանյան գիտնականների

1 В. Арутюнян, Каменная летопись армянского народа, Ереван, 1985.

նորագույն հետազոտությունների արդյունքները: Գրքի առաջին գլուխը ներկայացնում է հայկական լեռնաշխարհի տարածքի մ.թ.ա. 4-րդ-2-րդ հազարամյակների մշակույթը, ուրարտական Հայաստանի հուշարձանները: Իսկ երկրորդ գլուխը նվիրված է անտիկ Հայաստանի քաղաքաշինությանը և ծարտարապետությանը: Այս երկու հակիրճ գլուխներում հեղինակը համոզիչ ցույց է տալիս, որ ինքնատիպ և բարձր կատարելության հասած հայկական միջնադարյան ծարտարապետությունը ստեղծվել ու զարգացել է տեղական ավանդների հիման վրա, սերվելով նախաուրարտական, ուրարտական և հելլենիստական Հայաստանի շինարարական արվեստի նվաճումներից:

Գրքի հաջորդ գլուխն ընդգրկում է հայկական ծարտարապետության վաղ միջնադարյան ժամանակաշրջանը: Այստեղ մեծ տեղ է տրվում հայ դասական ծարտարապետության «Ոսկե դարի»՝ 7-րդ դարի հուշարձաններին: Հեղինակը նշում է, որ 7-րդ դարի առաջին կեսին, բարենպաստ սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանները նպաստել են Հայաստանում ծարտարապետության ու քաղաքաշինության ծաղկմանը: Այդ ժամանակաշրջանում մշակված սկզբունքներն ընկան հայկական ծարտարապետության հետագա զարգացման հիմքում: 7-րդ դարի հայկական հուշարձանների կարևոր առանձնահատկություններն էին կառուցվածքների կերպարի ճշմարտացիությունը, ծարտարապետական, գեղարվեստական, կոնստրուկտիվ ձևերի, հատակագծային ու ծավալային հորինվածքների փոխկապակցվածությունը, շենքերի տիպերի բազմազանությունը: Այս վերջին հատկանիշը հայկական վաղ միջնադարի ծարտարապետությունը շահեկան առանձնացնում է օրիստոնեական աշխարհի մյուս բոլոր ստեղծագործական դպրոցների շարքում:

4-7-րդ դդ. Հայաստանում վերելք ապրեց և աշխարհիկ ծարտարապետությունը: Գրքում ներկայացված պալատական համալիրները, ինչպես և աշխարհիկ կոթողային հուշարձանները, այդ թվում հայկական արվեստի մի ինքնատիպ բնագավառի՝ խաչքարերի վաղ միջնադարյան օրինակ հանդիսացող

«Թևափոր» խաչերը, ամբողջացնում են այդ դարաշրջանի հայկական ճարտարապետության կերպարը:

Այս և հաջորդ գլուխներում հեղինակը հատուկ ըննության է արժանացրել հայ ճարտարապետության զարգացման ժառանգական օրինաչափությունները, ժողովրդական բնակելի տան ճարտարապետությունից սերված ուշագրավ ձևաստեղծումները աշխարհիկ և կիսաշխարհիկ մոնումենտալ շենքերում:

Չորրորդ՝ ամենաթավալուն գլուխը հատկացված է Հայաստանի 9—14-րդ դդ. քաղաքաշինությանը և ճարտարապետությանը: Այն բաժանված է երկու ենթափուլերի՝ (9-11-րդ դդ., 12-14-րդ դդ.): Հեղինակը նշում է, որ 9-րդ դ. վերջից, արաբական տիրապետությունից ազատվելուց հետո Հայաստանում սկսվում է ճարտարապետության նոր վերելքը, որն անխզելիորեն կապված է երկրի ազատագրման, պետականության վերականգնման և տնտեսության զարգացման հետ: Այդ առանձնապես նկատելի է Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիում, որը դարձավ ողջ երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոնը: Մայրաքաղաքի շենքերը որոշիչ դեր խաղացին հայկական ողջ ճարտարապետության զարգացման հիմնական ուղղության վրա: Այդ դարերի հուշարձանների համար բնորոշ են գեղարվեստական արտահայտչականության նոր միջոցները: Ուժեղանում է պատերի հարթությունների պլաստիկ մշակման միտումը, կառուցվածքների վերսլացության գաղափարն իր արտահայտությունն է գտնում նաև ինտերիերում, փոխվում են բացվածքների մշակման ձևերը և այլն: Գրքում լայնորեն ներկայացված են Հայաստանի վանքային համալիրները, որոնցից շատերը գունագեղությամբ, բազմապիսի ու բազմաթիվ շենքերի ծավալատարածական հորինվածքների ներդաշնակությամբ, բնության հետ ունեցած հիանալի կապի շնորհիվ անսամբլային ճարտարապետության նմուշներն են:

Վ. Հարությունյանը այստեղ ներկայացնում է նաև Արցախի վանական համալիրները, որոնք, ցավոք, հայ ճարտարապետության պատմությանը նվիրված ընդհանրական աշխատություններում մինչև օրս կամ իսպառ չէին ընդգրկվել կամ էլ տրվել են հպանցիկ ձևով:

12-14-րդ դարերի Հայաստանում հատկապես Նշանակալից են նվաճումները Նոր կոնստրուկցիաների մշակման ասպարեզում: Հայ ծարտարապետները վարպետությամբ մեծ թոփփնե-րը ծածկում են առանց միջանկյալ հենակետերի՝ խաչվող կա-մարների համակարգի միջոցով, ստանալով միասնական, չքը-լատված ներքին տարածություն:

Չորրորդ գլուխը եզրափակվում է համառոտ, բայց իր նը-շանակությամբ հույժ կարևոր մի բաժնով՝ նվիրված փոխադե-ցությունների հարցին: Դա հայկական ծարտարապետության բավական բարդ և խորհրդային գիտնականների կողմից փաս-տորեն չմշակված մի խնդիր է: Մասնագիտական գրականու-թյան մեջ այս հարցում կա երկու տրամագծորեն հակադիր մոտեցում: Եթե հայրենական գիտնականները ընդհանրական բնույթի գործերում կամ շրջանցում են այս խնդիրը՝ կամ խո-սում միայն հայկական ծարտարապետության՝ այլ երկրների շինարարական արվեստի վրա ունեցած ազդեցության մասին, ապա արտասահմանյան հետազոտողներից շատերը նշում են միայն Հայաստանի ծարտարապետության կրած ազդեցություն-ների փաստերը: Երկու մոտեցումն էլ, իհարկե, թերի է և ոչ օբյեկտիվ: Ահա «Հայ ժողովրդի քարե տարեգրությունը» գըր-քում պրոֆեսոր Վ. Հարությունյանը հանգամանորեն դիտար-կում է արվեստաբանական այս նուրբ խնդիրը, ցուցաբերում անաչառ, անկողմնապահ մոտեցում. վերլուծում հայկական ծարտարապետության վրա սիրիական, սելջուկյան, վրացա-կան մշակույթների ազդեցությունների հարցը: Միաժամանակ հեղինակը նշում է նաև հակառակ պրոցեսը՝ Հայաստանի ծարտարապետության ազդեցությունը հարևան երկրների շի-նարարական արվեստների վրա:

Վ. Հարությունյանը համոզիչ ցույց է տալիս, որ այստեղ մենք գործ ունենք արվեստների փոխհարստացման հետ՝ մի երևույթ, որ միշտ էլ գոյություն է ունեցել ծարտարապետու-թյան զարգացման պատմության մեջ ընդհանրապես:

Հիևեերորդ գլուխը նվիրված է 17-18-րդ դդ. ծարտարապե-տությանը: Վանական համալիրների, բնակելի շենքերի, ին-ժեներական, արտադրական կառուցվածքների հետ բնութա-գրված են նաև հայկական ժողովրդական տան հատակագծա-

լին ու կոնստրուկտիվ առանձնահատկությունները: Ցանկալի էր, սակայն, ուշ միջնադարի շինարարական արվեստը ներկայացնելիս, տալ նաև հայկական գաղթօջախների ճարտարապետությունը:

Հաջորդ վեցերորդ գլխում, խոսվում է Հայաստանի 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին քաղաքաշինության և ճարտարապետության մասին: Հանգամանորեն վերլուծվում են քաղաքների (Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Նոր Բայազետ, Գորիս, Վաղարշապատ) կառուցապատման առաջադիմական սկզբունքները: որոնք արդյունք էին 1828 թ. Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո ուսական քաղաքաշինության ազդեցությանը:

Ընդհանրապես պետք է նշել, որ Վ. Հարությունյանի «Հայ ժողովրդի քարակերտ տարեգրությունը» գիրքը աչքի է ընկնում Հայաստանի քաղաքաշինական մշակույթին վերաբերող հատվածների խոր մասնագիտական բնույթով, նորահայտ փաստագրական նյութի առատությամբ, երևույթների նորովի մեկնաբանությամբ: Ղա հետևանք է հեղինակի՝ Հայաստանի քաղաքաշինության պատմության ուսումնասիրման գործում ունեցած մեծ ավանդին ու փորձին և բնորոշում է նրան որպես այդ բնագավառի խոշոր գիտակի:

Իր թեմայով և բնույթով ինքնատիպ և ուշագրավ է գրքի վերջին գլուխը, որում խոսում է Անդրկովկասի քաղաքների հայ համայնքների շինարարական գործունեության մասին: Հեղինակը արժեքավոր տեղեկություններ է հայտնում Շուշի քաղաքը հայերի կողմից հիմնադրվելու և քաղաքաշինական զարգացման, Բաքվի, Թիֆլիսի և Անդրկովկասի այլ քաղաքների կառուցապատման գործում հայազգի ճարտարապետների ներդրման մասին: Այս ոչ մեծ գլուխն իսկական նորույթ է հայկական ճարտարապետության պատմության ընդհանրական բնույթի աշխատանքներում և, անկասկած, հիմք կծառայի հետագայում այդ թեմայի ավելի մանրակրկիտ ուսումնասիրմանը:

Գրքի իմացաբանական արժեքները կրկնապատկվում են նրա հարուստ փաստական նյութի (մեծաքանակ և բարձրորակ չափագրական աղյուսակների) և շարադրանքի լեզվի ու ոճի շնորհիվ՝ խիստ գիտական և միաժամանակ բավական

մատչելի: Այս վերջին հատկանիշը, ցավոք բացակայում է հայկական ճարտարապետությանը նվիրված գիտական հրատարակություններից շատերում: Ծիշտ է, այդ գրքերի անոտացիաներում որպես կանոն նշվում է, որ Նրանք նախատեսված են նաև «ընթերցող լայն հասարակության» համար: սակայն գաղտնիք չէ, որ ընթերցողների մեծ մասը բավարարվում է միայն ճարտարապետական գրքերը թերթելով: Իսկ դրա պատճառներից մեկն էլ տեքստի շարադրանքի «ակադեմիական» չորությունն ու դժվարամատչելի ոճն է: Վ. Հարությունյանի գիրքը, ինչպես և Նրա նախորդ աշխատությունները այս առումով երջանիկ բացառություններից են: Իր լայնածավալությամբ, հանրագիտարանային բնույթով, ծանաչողական մեծ նշանակությամբ փաստորեն այս գիրքը կարող է նաև ծառայել որպես հայկական ճարտարապետության պատմության ուսումնական ձեռնարկ, որի կարիքը վաղուց ի վեր զգացվում է:

Ժամանակագրական առումով Վ. Հարությունյանի վերջին մենագրությունը՝ «Եկայք շինեսցուք» խորագրով¹, նվիրված է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի գահակալության շրջանում (1955-1988 թթ.) ս. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեությանը:

Հայ ժողովրդի պատմությունը հարուստ է Հայաստանի հոգևոր առաջնորդների շինարարական, վերանորոգչական զգալի աշխատանքների ծավալման բազմաթիվ փաստերով: Դարեր շարունակ, հատկապես երկրի պետականության ու անկախության կորստի ժամանակ, Ամենայն հայոց կաթողիկոսներն են, որ լազգապահպանության հերոսական ջանքերը զուգակցել են թշնամու ձեռքով և բնության արհավիրքներից անընդհատ ավերվող պատմական վանքերի ու բազմաթիվ եկեղեցիների վերանորոգման ու նորերի կառուցման հետ: Նրանց շարքում, սակայն առանձնանում է Վազգեն Առաջինի շինարարական գործունեությունը թե՛ աշխատանքների մեծ ծավալով ու հետևողականությամբ, նորոգվող ու նորակառուց շենքերի կարելիությամբ և թե՛ այդ հայրենաշեն գործի համար մշակված խոշոր գիտական ծրագրով: Այդ ծրագրի իրականացման ան-

Վ. Հարությունյան, Եկայք շինեսցուք, Էջմիածին, 1988:

միջական մասնակիցն է Վ. Հարությունյանը, որը Մայր Աթոռին կից ճարտարապետական հանձնաժողովի երկարատև անդամն է եղել (1956-1970 թթ.), իսկ 1971 թ. առ այսօր՝ հանձնաժողովի նախագահը:

«Եկայք շինեսցուք» գրքում հեղինակը ամենայն մանրամասնությամբ ու հանգամանորեն տալիս է երեք տասնամյակից ավել տևողությամբ Էջմիածնի վերանորոգչական ու շինարարական գործունեության պատմությունը: Բավական երկար է վերակառուցված ու նորովի շինված պաշտամունքային ու աշխարհիկ շենքերի ցանկը: Այդ մեծ գործը սկսվեց գլխավոր սրբավայր՝ Էջմիածնի Մայր տաճարի, վանքի համալիրի շենքերի նորոգումով ու նորերի կառուցումով: Մայր տաճարի վերանորոգումը (գմբեթակիր մույթերի ամրացում, կտուրի նորոգում, որմնանկարների մաքրում, հարավային զանգակատան վերականգնում և այլն) զուգակցվեցին պեղման աշխատանքների հետ, որի ընթացքում Մայր տաճարի այժմեան կառուցվածքի տակ հայտնաբերվեցին առավել հնագույն՝ հավանաբար Լուսավորչաշեն շենքի մնացորդները (գմբեթակիր մույթերի նախնական խարիսխներ, խորանի ներսում մի այլ արքիդի հետքեր): Կառուցվեցին վանքի հյուսիսային և արևելյան պարսկապատերը (ճարտարապետներ Ս. Սաֆարյան, Ռ. Իսրայելյան, Ս. Գուրզադյան, Լ. Սադոյան), հյուսիսային դարպասը՝ ժամացույցով աշտարակով ու արևելյան մեծ դարպասը կենտրոնական մուտքով (ճարտ. Ա. Գալիկյան), Նահատակաց հուշարձանը (ճարտ. Ռ. Իսրայելյան), նորոգվեցին «Տրդատա դուռը», Նոր վեհարանը, Ղազարապատ հյուրանոցը, սեղանատունը: Վազգեն Ա-ի հայրապետության տարիներին նորոգվեցին Էջմիածնի ս. Հովհաննիս տաճարի զանգակատունը, Օշականում Մեսրոպ Մաշտոցի դամբարանը և ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, որի ներսը ծածկվեց որմնանկարներով (նկարիչ Հ. Մինասյան), հիմնովին վերակառուցվեց Երևանի ս. Սարգիս եկեղեցին (Ռ. Իսրայելյանի նախագծով), որը փաստորեն ստացավ նոր կերպար, և ինչպես նշել է Վեհափառ Հայրապետը՝ «Քաղաքամայր Երևանը օժտվեց մի նոր զարդով, հայկական ճարտարապետության մի նոր կոթողով...»: Վերանորոգվեցին ու վերակառուցվեցին Գեղարդի բնակելի և տնտե-

սական շենքերը, կառուցվեց նոր վանատուն, վերաշինվեց Խոր-Վիրապի համալիրը, շինվեց Էջմիածին քաղաքի ս. Աստվածածին եկեղեցու նոր զանգակատունը (Ճարտ. Թ. Գևորգյան)։ վերակառուցվեց հոգևոր ծեմարանը, նորոգվեցին Հոփսիմեի, Գայանեի, Շողակաթի տաճարները Էջմիածնում, Բջնիի ս. Աստվածածին, Երևանի Զորավոր, Նորագավթի ս. Գևորգ եկեղեցիներ և այլն։ Վ. Հարությունյանը առանձին գլխով ներկայացնում է կաթողիկոս Վազգեն Ա-ի կառուցած շենքերը, որոնց թվում առանձնանում են «Հայկաշեն» ամառանոցը Բյուրականում (Ճարտ. Ռ. Իսրայելյան), Մայր աթոռի նոր հյուրանոցը, Ալեք և Մարի Մանուկյան զանգատունը (Ճարտ. Բ. Արզումանյան)։ Գրքի վերջին գլուխը նվիրված է Վազգեն Ա-ի հրատարակչական գործունեությանը, նրա մեկենասությամբ ստեղծված գեղարվեստական գործերին, ճարտարապետական փոքր ձևերին։ Վ. Հարությունյանի հրատարակչական բարձր որակով տպված և Գ. Խանջյանի կողմից ծաշակով ձևավորված այս գրքի ակնհայտ արժանիքներն են փաստական հարուստ տվյալները, ծանաչողական մեծ նշանակությունը և ամենակարևորն այն է, որ նյութը տրվում է ոչ թե պասիվ շարադրանքի, այլ վերլուծության և արժեքավորման եղանակով։

Բացի հիմնարար մենագրական աշխատանքներից, վերջին տարիներին Վ. Հարությունյանը հայկական ճարտարապետության ժառանգությանն ու նվաճումներին նվիրված մի շարք հանրամատչելի գրքուկներ է հրատարակել՝ Հայկական ԽՍՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման, ինչպես նաև «Գիտելիք» ընկերությունների գծով։ Ղըրանց շարքում առանձնանում են խորհրդային տարիներին հայկական հուշարձանների պահպանության ու նորոգման գործի դրվածքին¹, հայ մշակույթի ուսումնասիրման մեծ երախտավոր Թ. Թորամանյանին², հայկական ճարտարապետու-

1 Վ. Հարությունյան, Հայրենի կոթողների նոր ծակատագիրը, Երևան, 1982:

2 Վ. Հարությունյան, Թորոս Թորամանյան, Երևան, 1984:

թյան պատմությանը¹, էջմիածին քաղաքին և Նրա հուշարձաններին², Զվարթնոցին³ նվիրված գրքերը:

Վերոհիշյալ ընկերությունների գծով Վ. Հարությունյանը արդեն մի քանի տասնամյակ անխոնջ ու եռանդուն Նաև դասախոսությունների միջոցով հայկական ճարտարապետության նվաճումները պրոպագանդում է հանրապետության աշխատավորների, մտավորականության շրջանակներում, մատաղ սերունդի մեջ սեր սերմանում դեպի «երկնքի տակ բաց թանգարան» հանդիսացող Հայաստանի հուշարձանները: Այդ Նույն շնորհակալ աշխատանքը Նա կատարում է Նաև իր արտասահմանյան շրջագայությունների ժամանակ, լուսապատկերներով զուգակցվող ելույթներով հանդես գալով Ֆրանսիայի, Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի, Իրաքի, Հունաստանի հայ գաղթօջախներում: Այդ հայրենանվեր գործունեության արձագանքներն ու բարձր գնահատականը տրված են սփյուռքահայ բազմաթիվ թերթերում և ամսագրերում:

Վ. Հարությունյանը որպես հեղինակ ակտիվորեն մասնակցում է Նաև հանրագիտարանների, Հայաստանի պատմությանը և ճարտարապետությանը նվիրված բազմահատորյակների կազմմանը և հրատարակմանը: «Հայկական Խորհրդային Հանրագիտարանի» (որի գիտահրատարակչական և ճարտարապետության գիտաճյուղային խորհուրդների անդամն էր) բոլոր 12 հատորներում կան Նրա հոդվածները կարևորագույն հուշարձանների, ճարտարապետության տարբեր խնդիրների մասին: Հոդվածների շարքում հատկապես առանձնանում է «Ճարտարապետություն» ծավալուն հոդվածի շարադրանքը:

Վ. Հարությունյանը գրել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» 8-հատորյակի՝ հայկական ճարտարապետությանը նվիրված հատվածների զգալի մասը: Նրա գրչին են պատկանում 3-րդ՝ «Հա-

1 Վ. Հարությունյան, Հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգությունը, Երևան, 1979, (վերահրատարակված 1985 թ.):

2 Վ. Հարությունյան, էջմիածին, Երևան, 1985 (հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն):

3 Վ. Հարությունյան, Զվարթնոց, Երևան, 1985 (հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն):

յաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (9-րդ դ. կեսերից մինչև 14-րդ դ. կեսերը)» հատորի ճարտարապետության՝ 23-րդ և 53-րդ գլուխները, 5-րդ՝ «Հայաստանը 1801-1870 թվականներին», 6-րդ՝ «Հայաստանը 1870-1917 թվականներին» հատորների համապատասխան ենթագլուխները և 7-րդ՝ «Խորհրդային իշխանության հաղթանակը Հայաստանում 1917-1941 թթ.» հատորի ճարտարապետության բաժինը (Լ. Բաբայանի հետ):

Վ. Հարությունյանը և՛ որպես հեղինակ և՛ որպես խմբագրական հանձնաժողովի անդամ մասնակցում է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Հայկական ԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության կողմից հրատարակության պատրաստվող՝ «Հայկական ճարտարապետության պատմություն» 6-հատորյակի նախագծմանը: Նա գրել է 2-րդ հատորի՝ վաղ միջնադարի Հայաստանի քաղաքաշինությանը և աշխարհիկ ճարտարապետությանը նվիրված գլուխները:

Վ. Հարությունյանի գիտական գործունեությունը չի սահմանափակվում միայն մենագրություններով՝ նա ակտիվորեն մասնակցում է հանրապետական, համամիութենական և միջազգային գիտաժողովներին, հանդես գալով մինչև այդ չուսումնասիրված, բայց կարևոր և հրատապ՝ հայ արվեստաբանության խնդիրներին վերաբերող զեկուցումներով: Այդպիսին են նրա ելույթները Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական գիտական կոնֆերանսներից երկրորդում («Միջնադարյան Հայաստանի մոնումենտալ աշխարհիկ ճարտարապետության ժողովրդական ակունքները»), երրորդում («Արևելյան Հայաստանի քաղաքները 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին»), չորրորդում («Անտիկ ճարտարապետության վերապրումների որոշ արտահայտությունները 9-11-րդ դարերի ճարտարապետության և զարդարվեստի մեջ»), հինգերորդում («Անտիկ ավանդույթների ժառանգությունը վաղ քրիստոնեական հայ ճարտարապետության մեջ»):

Հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ հորինվածքային ձևերի, դեկորատիվ միջոցների ժառանգության

օրինաչափություններին են վերաբերում Վ. Հարությունյանի՝ Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումներից երկրորդի պլենար նիստում (Երևան, 1978), երրորդում (Վիչենցա, 1981 թ.), չորրորդում (Երևան, 1985 թ.) և հինգերորդում (Վենետիկ, 1988.) կարդացած զեկուցումները: Հայ-վրացական ծարտարապետական առնչությունների մասին էր նրա ելույթը վրացական արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիումում (Թբիլիսի, 1977 թ.): Այս զեկուցումները հետագայում զարգացվելով դարձան մենագրական հոդվածներ կամ վերամշակվելով մտան Վ. Հարությունյանի ընդհանրացնող աշխատությունների մեջ:

Վ. Հարությունյանի մենագրությունները, զեկուցումները, գիտական պարբերականներում և ժողովածուներում տպված շուրջ 150 աշխատությունները, որոնք նվիրված են հայ ծարտարապետության զարգացման բոլոր շրջաններին, ներթմված են բարձր գաղափարայնությամբ և գիտական սկզբունքայնությամբ, աչքի են ընկնում ծարտարապետական գիտության խնդիրների պարզ պատկերացմամբ: Զբաղվելով հիմնականում Հայաստանի հին և միջնադարյան ծարտարապետության հետազոտմամբ, Վ. Հարությունյանը միշտ տոգորված է արդիականության զգացումով, չի կորցնում կապը ծարտարապետական պրակտիկայի հետ և զգայուն է նրա պահանջների նկատմամբ: Այս ամենը նրան բնորոշում են որպես խորհրդային ծարտարապետական գիտության աչքի ընկնող և բազմաձևատակ ներկայացուցիչներից մեկը:

Գիտահետազոտական աշխատանքից բացի Վ. Հարությունյանի գործունեության մյուս կարևոր բնագավառը մանկավարժությունն է և կազմակերպչական-հասարակական աշխատանքը:

Որպես հայկական արվեստի և ծարտարապետության լավագույն գիտականներից մեկը, Վ. Հարությունյանը մի քանի տարի տնտղությամբ եղել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության սեկտորի աշխատակիցը, իսկ 1951-1953 թթ. նրա վարիչը: Գիտական աշխատանքի հետ միասին, որ կատարել է այստեղ, ծարտարապետության բաժնում, նա շատ ջանք է թափել արվեստագիտական կադրերի պատրաստման և հայ արվեստին վերաբերող աշխատությունների հրատարակման համար: Վերը նշ-

ված սեկտորում և Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ծարտարապետության ամբիոնում նրան հանձնարարվել է ասպիրանտների ղեկավարությունը. իր տասից ավելի սաները հաջողությամբ պաշպանել են դիսերտացիաները:

Շատ արդյունավետ է եղել նաև Վ. Հարությունյանի աշխատանքը ծարտարապետության պետական օրգաններում: 1945-1948 թթ. լինելով Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին կից ծարտարապետության գործերի վարչության պետի տեղակալը՝ նա մեծ ջանք թափեց հետպատերազմյան շինարարության, հանրապետության քաղաքների և բնակավայրերի հատակագծման և կառուցապատման, ծարտարապետական հուշարձանների գիտական հաշվառման տեխնիկական վիճակի արձանագրման, մասսայականացման, ինչպես նաև վերականգնման և պետական պահպանության միջոցառումների կիրառության ուղղությամբ:

Գիտահետազոտական մեծ աշխատանքի հետ միասին, Վ. Հարությունյանը արդեն կես դարից ավել զբաղվում է ծարտարապետական, շինարարական կադրերի պատրաստման գործով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: Նա եղավ ծարտարապետության բաժնի ստեղծման նախաձեռնողներից՝ մի բաժին, որը կարևոր դեր խաղաց Հայկական ԽՍՀ հետպատերազմյան շինարարությունը կադրերով ապահովելու գործում: Վ. Հարությունյանը շուրջ 45 տարի գլխավորում է ծարտարապետության ամբիոնը, վարելով ծարտարապետության տեսության և պատմության դասընթացը. ուսանողներին դաստիարակելով ծարտարապետության և քաղաքաշինության առաջավոր սկզբունքների ոգով: Նրա նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ծարտարապետաշինարարական ֆակուլտետում կազմակերպվեց «ծարտարապետական հուշարձանների վերականգնում» մասնագիտացմամբ ուսուցում:

Վ. Հարությունյանի ծառայությունների թվին պետք է դասել հայ ծարտարապետության պատմության դասընթացի մշակման գործը: Այդ դասընթացը, ինչպես և ծարտարապետության և տեսության այլ բաժիններ նա վարում է հետաքրքիր և բարձր գիտական մակարդակով: Այժմ նա տպագրության է

հանձնել «Հայկական Ճարտարապետության պատմություն» ծավալուն մենագրությունը, որը կդառնա այդ առարկայի վաղուց սպասված ուսումնական ձեռնարկը:

Գիտահետազոտական և մանկավարժական գործունեությունը Վ. Հարությունյանը հաջողությամբ զուգակցում է հասարակական ակտիվ աշխատանքի հետ: Բազմիցս ընտրվել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի անդամ, Երևանի քաղխորհրդի դեպուտատ: Նա սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի վարչության նախագահության, արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի ընկերության վարչության անդամ է: «Գիտելիք» ընկերության հանրապետական վարչության Ճարտարապետության մասնաճյուղի նախագահ, Հայկական Խորհրդային Հանրագիտարանի գիտահրատարակչական խորհրդի, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության գիտամեթոդական խորհրդի մի շարք գիտխորհուրդների անդամ:

Նշանակալից է Վ. Հարությունյանի աշխատանքը Հայաստանի Ճարտարապետների միությունում: Երկար տարիների ընթացքում նա գլխավորել է միության տարբեր ստեղծագործական սեկցիաները: 1949 թ. մինչև 1962 թ. հանդիսացել է միության վարչության և քարտուղարության անդամ, իսկ 1962 թվականից Հայաստանի Ճարտարապետների միության համագումարներում (1962, 1964, 1966, 1969 թթ.) անընդմեջ ընտրվել է վարչության նախագահ: Վ. Հարությունյանը Հայկական հուշարձանների պաշտպանության ընկերության ստեղծման նախաձեռնողներից և ղեկավարներից մեկն է հանդիսանում: Նա 1964-1977 թթ. եղել է Հայկական ԽՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերության հանրապետական խորհրդի նախագահի տեղակալ, իսկ 1977 թվականից մինչև այժմ՝ խորհրդի նախագահն է:

Բեղմնավոր գիտական և հասարակական աշխատանքի համար Վ. Հարությունյանը պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» և «Պատվո նշան» (երկու) շքանշաններով, մի շարք մեդալներով և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի

պատվոգրերով, արժանացել Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

1979 թ. Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիան Վ. Հարությունյանին շնորհեց Թ. Թորամանյանի անվան մրցանակ՝ «Հայաստանի ծարտարապետության պատմությանը և տեսությանը նվիրված գիտահետազոտական նոր և մեծարժեք աշխատությունների համար»: Մրցանակի վկայագիրը և հուշամեդալը Ջվարթնոցում հանդիսավոր պայմաններում գիտնականին հանձնեց ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարժումյանը:

Ծարտարապետ-գիտնական, պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանի ողջ ստեղծագործ կյանքը անբաժանելի կապված է հայ մշակույթի բազմազան և կարևոր բնագավառների հետ: Ծնորհիվ իր լայն շրջահայացքի, հայ արվեստի և ծարտարապետության հարցերի խոր ընդգրկմանը, հրատարակած աշխատանքներին, Վ. Հարությունյանը արժանի հեղինակություն է վայելում ոչ միայն խորհրդային ծարտարապետների շրջաններում, այլև Սփյուռքում, արտասահմանյան գիտական շրջանակներում:

Գիտա-մասնայական գրականություն
Մուրադ Մարգարի Հասրաթյան
ՎԱՐԱՋՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Научно-популярная литература
МУРАД МАРГАРОВИЧ АСРАТЯН
ВАРАЗДАТ АРУТЮНЯН

На армянском языке
Издательство «Хорурдани քոօ», 1989

Խմբագիր՝ Մ. Հարությունյան
Նկարիչ՝ Հ. Մնացականյան
Գեղ. խմբագիր՝ Ֆ. Գալստյան
Տեխ. խմբագիր՝ Է. Ծանձապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Է. Պողոսյան

ИБ № 6719

Հանձնված է շարվածքի 22.06.1989: Ստորագրված է տպագրության 12.10.89 թ.: ՎՖ 02387: Ֆորմատ 84×108¹/₃₂: Թուղթ՝ տպագր. № 1: Տառատեսակ՝ «Արմենուիի»: Տպագրություն՝ բարձր, 2,1 պայմ. տպ. մամ., 2,0 հրատ. մամ. + 16 էջ ներդիր: Տպաքանակ՝ 2000: Պատվեր՝ 1546: Գինը՝ 35.4: «Խորհրդային գրող» հրատարակչություն, Երևան—9, Տեղյան 91:

Издательство «Хорурдани քոօ», Ереван-9, ул. Теряна 91
Հրատպետկոմ «Պարբերական» արտադրահրատարակչական միավորման
Արտաշատի շրջհրատի տպարան:
Արմգոսкомиздат типография Арташатского райиздата издательско-производственного объединения «Периодика»

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0066205

[350pp]

~~45-10~~

A $\bar{11}$
86830